Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» նոյեմբերի 2009 թ. N---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ, ՀՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 23-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ Նախագահի մրցանակի դափնեկիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի Վարազդատ Հարությունյանի անունով Կենտրոն վարչական շրջանի Այգեստան թաղամասի Այգեստանի հ.11-րդ փողոցն անվանակոչելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող
աշխատանքների, առողջապահության, սոցիալական
պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ Մ. Դովլաթյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, ՀՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ՀՀ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՅԳԵՍՏԱՆԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարազդատ Հարությունյանի անվամբ առաջարկվող Այգեստանի 11-րդ փողոցը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան թաղամասում:

Այգեստան 11-րդ փողոցը սկիզբ է առնում Հրաչյա Աճառյանի անվան հ.72 դպրոցի մոտից՝ ձգվելով հարավ, հասնում է Չարենցի փողոցի 1-ին նրբանցք: Փողոցը հյուսիս-արևմուտքից զուգահեռ է Հրազդան քաղաք տանող երկաթուղուն:

Համարակալված փողոցի անվանակոչությունը նպատակ ունի հավերժացնել ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի հիշատակը:

Որոշման համար հիմք է հանդիսանում ճարտարապետ, ճարտարապետության պատմաբան, ճարտարապետական հուշարձանների վերականգնման տեսաբան, մանկավարժ, հասարակական գործիչ, «Վան-Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիր, ճարտարապետների միության նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ Նախագահի մրցանակի դափնեկիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի պատվավոր քաղաքացի Վարազդատ Հարությունյանի մեծ վաստակը:

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի /10.07.2009թ./ միջնորդությունը Վարազդատ Հարությունյանի անունով փողոց անվանակոչելու համար:

Հարցը քննարկվել է կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2009թ. հոկտեմբերի 29-ի նիստում և քվեարկվել միաձայն /կողմ՝ 11, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա/:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերիմշտականհանձնաժողովի անդամ,
Կինոռեժիսոր **Միքայել Ֆրունզեի Դավլաթյան**